



## **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 1-Ա**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԱՄՎԵԼ ՅՈՒՋԲԱՇՅԱՆԻՆ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ ՆՈՆԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2022 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՆՀ-343-Ա և թիվ ՆՀ-344-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

### **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Սամվել Յուզբաշյանին և Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նոնա Գալստյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

**Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 29  
ք. Երևան